

ՏՄԱԿ ԵՒ ՉՈՐԲՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՐՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

ՆԵՐԿԱՑ 1886 ԹԻՎՆ

Կը հրատարակվի Թիֆլիսում, չափերը երեք անգամ, նոյն դիրքով և նոյն պարագրաֆով: Մենք
կը ստանանք տեղական ՀԱՅԿԱՅԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ և պ. ՇԱՎԵՐԴՈՎԻ պալլիքներում: ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ գտնվում է Բարձրակի և Բաղարին փողոցների անկիւնում, Թամար շէշել տանը, № 12 բնա-
կարանում: Ուղղակի մուտքը Բաղարին փողոցից է, Բեմէսկէնայա Ուլարալայի դիմաց:
Թիֆլիսում «ՄՇԱԿ» համարները հատով ծախվում են 7 կոպեկով պ. ՇԱՎԵՐԴՈՎԻ պալլի-
քներում և պ. ՏԵՐ-ՅՈՎԱԿԵՓԵԱՆԻ ծխախոտի մագաղանում (Կովկաս հիւրանոցի տակ):

Յայտարարութիւնները, ամեն լեզուներով, ընդունվում են ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ և պ. ՇԱՎԵՐԴՈՎԻ
մօտ: Յայտարարութիւնների իւրաքանչիւր բառին վճարվում է 2 կոպեկ:
ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ, յունվար ամսի ընթացքում, բաց է ամեն օր, առաւօտեան 10 ժամից մինչև
2 ժամ և երեկոյեան 5—7 ժամ, իսկ կիրակի օրերը առաւօտեան 10—12 ժամ:

Կայսերութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվում համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով: ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAR».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Մշակը» ինչպէս ընդունւեցաւ:—ՆԵՐԿԱՅԻՐ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ: Քաղաքական տեսութիւն: Նամակ Թիւր-
քիայից:—ՀԱՅԿԱՅԻՐՆԵՐ:—ՖԵԼԵՏՈՆ: Համալի
մատչանք:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

„ՄՇԱԿ“ ԻՆՉՊԵՍ ԸՆԴՈՒՆՎԵՑԱՒ

I

«Մշակը» կրկին սկսում է իր ընդմիջված
գործունէութիւնը:

Ներկայ տարվանից «Մշակը» մտնում է
իր գոյութեան մի բոլորովին նոր, բնական

ՖԵԼԵՏՈՆ

ՀԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆԱԶԱՐԸ

Բարով, էլի բարով, հաղար բարի, Մշակ ակա-
պէր:

Շատ ուրախացայ քու տիւրը, քու ազիւ արիւրը:
Դուն դարդուտ, իս դարդուտ, դարդուտիւ
ընկը մէտի, կուլի սրտեմերէնուտ հոշնայ մէքի:

Ան միր սիրտն ինչը կու հոյցնէ, քանի կանք
ու պիտի ըլնը, օրն օրվան վրա դարդին միւր
դարդը պիտի աւելնայ, հովութենի ճանփայ վունց
մէկուտը չկայ միւր համա:

Եսէնց պիտի տանջվիլը ու չարչիւրը ու դա-
ռը քրտնալը միր օրու ուշադին պահիլը:

Քանի տարի է դուտ ինք էլի միր վաթանսմէն
ու էլ ինչ դաւանաւ չարայ չէլաւ միւր:

Նարար էս ինչ սիւլ աստղի ինք ծնի միւրը:
Ախտուտ, ախտուտ միր չայիլ չիման տիւրի, ախ-
տուտ միր մալ ու մամլաքալ:

Նստիլ ինք օլքա, օլքա ու ուրիշի անկ ու ուն-
քին ինք մալի անուտ, ուրիշի օղորմութենին մը-
նուտ:

Միւր էլ կոսիլը մարթ ինք, միւր էլ կոսիլը
Աստուտ ասիլդամ ինք:

Մօղ ին էլի աղէքն ու ջանեմերուտ հանում ին:
Միւր էլ դաւիլ ինք նրանց ճուրա ու փութիւն-
ուտ դուտ է դալ:

Քանի խօսքիլ ու խօստմունքիլ, քանի ումիլ
ու միլիթարանք:

Ան դիւի ասուտ, դիւի դալ, վունցոր իրանք
սուտ ու դալ ին:

Սրտացաւ օլով չէլաւ միւր համա:
Ումը միւր դիւնք, օլ է միլլաւորը:

էլի ու էլի միւրը:

Միւր օլ էր ասում միր տունն էսէնց չինիլը որ
վունց չարար ունենայ, վունց սաճման. տուն ին
թափում գուղիլը չուր կանսմէն ու տանում ին
ու տանում:

Վալին էլի է էսէլան ու միւր տարի, թէ համա-
ցակում ինք ես ձէն հանի, ես ծպտուն. էլ
վունց կնիլ է մնում սաղ, վունց հէր, վունց մէր,
վունց վուրթիլը, վունց քուր ու վունց էլ ախպէր:
Փուլում է սաղ միր գեղիլը արէն ծովով ու ինչը-
ճերու լէշի վրա ակուան ու գաղանն է խիթար-
վում:

Ախպէրն բաբաղան միր ճակտին էս է գրած
ու էս օրի ինք արժանի:

Ինչ անիլը:

Ինչ պիտի անիլը որ օլքիլ էլ անցիլ ինք,
Մշակ ակապէր, մէկ մէկու անկումը լուս չինք
ուղուտ, մէկ մէկու ասում ինք ու մանում, մէկ
մէկու տակը հուր ինք փորում:

Ուրիւր գնանք, վուրթէնն էլ մալի անիլը, վուր-
դի էլ մէկ անց ինք կացիլ, դիւի միր ձեռով փո-
րած հուրիլ է. վուտը փութում ինք թէ չէ, դիւմիլ,
դէվիլ ինք թափում մէ մէկ, մէ մէկ:

Ու է էն Աստուտ մարթիլ, ես ունն էրիւտ Աստուտ
էն ջանն ու դուտիլ որ ձեռը հասցնէ ու դուտ
բաշէ միւր դիւմունիս մէտի:

Իմ ախալը քիւզ վաղ իմ թարիլի արիլ, Մշակ
ակապէր. ու քու ախալը միւր օրինակ բոլորիւ:

Տաս տարի աւել քրտնիլ թափեցիլ, դուրա-
ղուրան արիւր քու նմանիլու համա. օլ չնորհա-
կալ կացաւ քիւմէն, օլ ձեռն ու վուտը ծափ էրիւտ
քու խաթիլը: Քու բեքախտութենունն էլ, էլի ի-
րանց ինքը պարտեցի մարթիլը:

Իս որ քիւզ ասում էլի, Մշակ ակապէր, թէ
հետիլ բան արա, որ հատ տրիւտ չը փախչիս էս-

դարձաւ մի անհրաժեշտ պահանջ ժողովր-
դի համար:

Առաջ «Մշակի» գոյութիւնը պահանջնե-
լու համար հարկաւոր էր մի մասնաւոր ան-
հատի, նոյն իսկ խմբագրի անձնական նիւ-
թական գոհաբերութիւնը:—այժմ «Մշակի»
գոյութիւնը պահանջնեւ է նւթական
նոյն ինքն ազգը և միմյանց ազգը: Պարզ է
որ «Մշակի» գոյութիւնը պէտքէ լինի այժմ
իրան ազգի մտաւոր զարգացման, մտաւոր
կեանքի պահանջների արձագանք, արտա-
յայտիլ և չափ:

II

Եւ դա լոկ խօսք չէ միայն, այլ իրական
նութիւն է:

«Մշակի» գոյութիւնը այսուհետեւ կախ-
ված կը լինի իրան ազգից, նրա գոյութեան
պահանջները կախված կը լինի հայերից:
«Մշակի» գոյութեան աշոյ կամ անաշոյ
շարունակութեամբ կարելի կը լինի այժմ
չափիլ հայ ժողովրդի մտաւոր գիտակցու-
թեան, նրա ինքնաձանաչութեան ու հա-
սունութեան չափը:

Մենք կարծում ենք որ այդ խօսքերը
մենք իրաւունք ունենք արտասանել ամե-
նամեծ վատհալութեամբ, քանի որ «Մշակի»
բացակայութեան ժամանակ ոչ մի ուրիշ
հայոց թերթ չը կարողացաւ, չիմացաւ
բռնել «Մշակի» բաց մնացած տեղը: «Մշա-
կի» բացակայութեամբ նրա նախկին բո-
նած տեղը թափուր էր մնացել և, ինչպէս
երևում է, դարձեալ թափուր կը մնայ, ե-
թէ «Մշակին» կրկին վիճակի վերջնակա-
նապէս իջնել դրական ասպարիզից:

դանց ու չուլ ու փախալ բաժան բաժնեւոր չը
չինիս, էս էի ասում, ակապէր: *)

Ան չիւմ չիմանաւ խիւլ չտանիս թէ դնամիլ
անիլով իմ միտք բերում քիւզ էս խօսքիլը, ես
քու բեքախտութենի վրա իս մէ ջրանգ էլ է ուրա-
խացիլ ըլնի իմ օրումը: Չէ, ակապէր, Աստուտ
մի արասցէ, թէ քու վառն ուղենամ, թող Աս-
տուտ ինձ ապ, իմ զիւն բերէ:

Խօսքն էն է որ յօրէն դէնը մուղայիլի կենաս.
թէ ասածիս չէր աւտում էսէլալը, էսգումէն դէ-
սը իս փորցով փորցեցիլ ու գուրծքով ճանչը-
ցար ինչ պտուղիլ էլ ինք միւրը:

Գնա հիմի, Մշակ ակապէր, նստի ու լաց ըլի
գլուխը, միւր էլ հիւը. նստի ու մէ մէկ յիւ ասա
միր դարդիլը, միր սուքը, միր չիւմանը... յիւ ասա
թէ ինչ ցաւերով ին տանջվում միր ախալալը
աշխրբի ամէն քունջ ու պոճախումը, վուրդիլ
միւր տուն ու տիւր ունիլը, վուրդիլ վար ու
ցան ունիլը, վուրդիլ գոմ ու գութան ունիլը:
Բաց արա մէ մէկ միր եարէքը, ինչքան էլ գուլէ
գլուխիլ ըլի, հաջով չէ, մի վախենա, բաց արած
կարին էլի դարման կան, օչովլումէն մի քաշվիլ բը-
ղալի քանի կանայ, լաւն էն է էլի միւր տեսնիլը
միր եարէքը կանց ուրիշը, լաւն էն է էլի զիւր
միւր ճարիլը կանց ուրիշը, էսգում որ ուրիշի հէ-
մութիւնը միւր հէքումիլ չի անի, ուրիշի սիրտը
էսգում չի ցաւի միւր համա, ինչոր միր սիրտը
կու ցաւի:

Փորէ, քիւրթէ մէ խմցիլ թէ ինչեմէն է միր
մէջը էսգում նիլ ու նախանջը, էսգում մէկ
մէկու թճամուլիլ ու ատելութիւնը. էլ ինչի միր
մէջը սէր չկայ, միութիւն չկայ, աւտալ ու էթիլ-
բար չկայ, ինչի մէկ մէկու ձեռը չինք ասալի ու

*) Տես «Մշակ» 1872 թ. № 2:

III

Բայց ինչի՞ մէջն է այդ երեւոյթի դադո-
նիլը: Գաղանիլը դրա մէջն է, որ «Մշակը»
միշտ գգացել է այն, ինչ որ դգացել է ժո-
ղովրդի մեծամասնութիւնը և իր կողմից
գգալ է առել ժողովրդին այն, ինչ որ ինքն
է գգացել. «Մշակի» սիրտը միշտ հիւան-
դաւ ցնցումների է կնթարկվել, երբ ցնցիլ
է հիւանդաւ կերպով հայի սիրտը, նորա
սիրտը միշտ ուրախութեամբ է բաբախել,
երբ ուրախութեան կամ յուսոյ ներգործու-
թեան տակ բաբախել է և հայի սիրտը: «Մշա-
կը» միշտ իմացել է, այսպէս թէ այնպէս,
իր խօսքի ներգործութեամբ բաբախել տալ
և հայի սիրտը:

Ինչպէ՞ս է եղել այդ բանը,—այդ մասին
թող դատէ ինքն հասարակութիւնը, բայց
մի բան հաստատ է, որ «Մշակի» ամեն մի
համար, ամեն մի յօդուած, ամեն մի տող և
ամեն մի բառ անգամ կամ չափից դուրս
տեւացրել, վրդովեցրել է միշտ հային, կամ
չափից դուրս ուրախացրել, ոգևորել է նը-
րան, բայց երբէք անտարբեր չէ թողել նը-
րան: «Մշակի» և հայ ազգի մէջ կար միշտ
մի ներքին, հոգեկան անխզելի կապ:

Այդ է պատճառը, որ «Մշակին» երբէք
ոչ մի հայ չէ արհամարհել, այլ նրան
միշտ կամ սաստիկ սիրել է հայը, կամ
սաստիկ տառապել: Այդ է պատճառը, որ
«Մշակը» երբէք չէ ունեցել անտարբեր-
նէր, բայց նա ունեցել է միշտ կամ ան-
սահման բարեկամներ և ոգևորված
պաշտպաններ, կամ անհաշտ թշնա-
միներ:

միր ծանրը լուծը մէտի չինք քաշում, որ դիմու-
նիս մէտի թեթիւութիւն ըլի, դիմունա մէտի կա-
նխանք ազատ չունչ քաշի:

Մէ ասա ինչ էլաւ էս միր ուսումն ու մանուն-
դը, միր վարժարանն ու վարժատունը, ինչ էլաւ
միր գոված թատրոնը, որի համա գեթուր պէս մէկ
մէկու չանայ էլիւ կոտորում. ինչ էլաւ միր յրա-
մատիկական Ալուալը, որի համա, հարու մէկէլ
տարի շատերեմէն հինգ հինգ թուման մօղ արին
մարթաղուտ, փուրթը դրին բանիլը, ամա ինքը
ակուալը ջէր էլ թէ գալիս իս. ինչ էլաւ, ինչ
պատահեցաւ միր Բարեգործական Ընկերութենին,
որը բացվիլս մօղը միւր օխտը հարուր ննգիլ ու-
նէր ու հիմի, աւելի ծաղկելու փոխանակ, էրկու հա-
մար ննգիլ էլ չունէ. ինչ էլաւ միր սիրած ու ու-
գած մշակներու Այաստարանը, որի համա միւրը
էնքան դուրս ցաւեցիլը մէկ մէկունը, ինչ էլաւ
Ախտանուցը, Հիւանդանուցը ու հաղար ուրիշ
էլի էս հանգի բանիլը, որի հալ ու ախալը դուն
ուրիւ լաւ կու խմանաս յօրէնի դէնն ինձ վրա:

Ան հերիք էլաւ էսքան դաւը խօսքիլը, բախ-
չէ, թէ ակապէրիս. էսօր տարեմուտ է ու նուր տա-
րին, միր հին ծէս ու աղաթով, քաղցը խօսքերով
պիտի շունաւորին:

Քաղցը պառկում, Մշակ ակապէր, բաղում տա-
րի էս օրին, էստու վրա լաւ օրին հանիս ուճու-
րով, բուճուրով, անուի տիւրով ասիլով ու տակով:
Աստուտ քու մէ օրը հաղար անէ. Նա փրկէ ու
աղաթէ քիւ ամէն չարամէն, դուշմին սրտով չիւս.
օրով ու ուրիւրով կշտանաս: Աստուտ քիւ ջան
տայ ու վուտիլ վրա դալիւ կանգնիս. բարձր ու
քրտնալը սաղ ըլի ու մուշտարիլը շատանան օրն
օրվան վրա: Սիւմն ծիրունու օրհանգն ըլի դըլ-
իւր ու արեւուր, Մշակ ակապէր:

Համալ

IV

Ինչպէս ասացինք, առաջվայ տարիներու չէր նայելով սիրոյ կամ աստուծոյն, «Մշակը» հանգիստ կերպով շարունակել է իր ընթացքը, նիւթապէս գրեթէ կախած չէր լինելով ազգից,—այժմ «Մշակը» գոյութիւնը, նրա նիւթապէս գոյութիւնը, կախած կը լինի ազգի գիտակցական ինքնաճանաչութիւնից:

Բայց կարծում էք թէ այդ պատճառով մենք կը փոխենք մեր ուղղութիւնը, կը սկսենք շողորմել ժողովրդի ամեն տեսակ վատ կրքերէն ու ստոր ինստինկտներէն, կը խնայեմք, գլուխը կտնկենք, որովհետեւ այժմ մեր գոյութիւնը կախած կը լինի բաժանորդներէն բաղկացած ինքն ինչ, ինչպէս առաջ, գլխաւորապէս մեր անձնական անկախ գիւղից,—չառ կը սխալվէք: «Մշակը» նոյնը կը լինի, ինչ որ էր տարիներէ ընթացքում:

Եւ թող օրից օր բազմանան մեր ուղղութեան անհաշիւ թշնամիները, մեզ ատողները, կատաղութեան փրփուրը բերանին «Մշակի» մասին խօսողները ու նրա անունը արտասանողները,—փոյթ չէ:

Մենք գործնով կը միջնորդենք և մեզ բարոյապէս վարձատրված կը համարենք, եթէ ուրիշ կողմից «Մշակին» ճշմարիտ բարեկամներն ու համակրողներն թիւը օրից օր կաւելանայ և կը հասնի մի հայ պարբերական հրատարակութեան համակրողներէ մինչև այժմ երբեք չեղած թիւին:

V

Եւ այդ կողմից մենք կարող ենք նոյն իսկ այսօր մեզ վարձատրված համարել: Երկու ամիս սրանից առաջ մենք գիտեցինք հայոց հասարակութեանը, յայտնելով «Յայտարարութեան փոխարէն» համարում, որ եթէ ազգն ուզում է պահպանել «Մշակը» որպէս ամենօրեայ թերթ, թող տայ մեզ յայտնի թիւ բաժանորդներէ,—եթէ ոչ մենք կը հրատարակենք մեր թերթը շաբաթը երեք անգամ:

Եւ մեր այդ հրաւերի հետեւնք ինչ էր: Կարճ ժամանակում մենք ստացանք բազմաթիւ համակրական նամակներ և հեռագիրներ, ստացանք ամեն կողմից բաժանորդների այնքան մեծ քանակութիւն, որ «Մշակի» գոյութիւնը կարող է այժմ ապահոված համարվել թէև ոչ թէ որպէս ամենօրեայ թերթի, բայց գոնէ որպէս շաբաթական երեք անգամ հրատարակվող լրագրի:

Չը նայելով որ մենք այնքան բաժանորդ չունենք որ կարողանանք գոնէ այս տարի ամեն օր հրատարակել մեր լրագիրը, բայց այնու ամենայնիւ այս բոլորից, որքան մեզ յայտնի է, մենք ունենք աւելի բաժանորդներ, քան թէ թիֆլիսի օր և է ուրիշ լրագիր:

VI

Ուրեմն, պարզ է, որ հայերի համար ամենօրեայ թերթ ունենալը դեռ ևս իրական պահանջ չէ,—որովհետեւ պահանջել կարելի է միայն այն ժամանակ երբ պահանջածի համեմատ տրվում է,—այլ միայն պահանջ կայ այնպիսի թերթ ունենալու, որ շատ շատ կարողանայ շաբաթը երեք անգամ լոյս տեսնել:

Ինչ որ տալիս էք, այնքան էլ կը ստանաք փոխարէն,—ասէ անխախտելի լոգիկական խիստ և անողորմ օրէնքը: Իսկ ժամանակով եթէ աւելի կը տաք,—աւելի էլ կը ստանաք: Ահա պարզ ընդհանրացումները առանց ֆրազներէ: Մնացածը արուեստական կը լինի, բարդակ ֆրազա կը լինի:

VII

Չէ կարելի չը խոտովանել որ հայերը

դեռ ևս մտաւոր և բարոյական զարգացման այն պերիօդի մէջ են գտնվում, երբ անհատի անձնական կամքը հասարակական գործի մէջ դեռ ևս աւելի զօրեղ է, քան թէ ամբողջ ազգի հաւաքական կամքը:

Եւ հիմա նորից սկսելով հրատարակել «Մշակը», մեր նպատակը պէտք է լինի զարգացնել հայոց հասարակութեան մտաւոր, բարոյական և հասարակական կիսներէ մէջ աւելի մեծ գիտակցութիւն, աւելի լայն մտաւոր պահանջներ, աւելի մեծ բարոյական հասունութիւն և նոյն իսկ այն հաւաքական կամքը, որ դեռ ևս շատ և շատ պակաս է այդ ազգին:

VIII

Այժմ դիմելով հայերին մենք կտանք դուռ արեցիք ինչքան կարողացաք,—մենք էլ կանենք ինչքան կարող ենք: Երբ մենք ունենք մեր սեփական միջոցներ ամենօրեայ թերթը պահպանելու,—մենք անում էինք աւելի քան կարող էր անել ամբողջ հասարակութիւնը: Բայց այժմ, երբ հերթն եկաւ ամբողջ ազգին ամենօրեայ թերթը պահպանելու, նա ապացուցեց որ թէև կարող է պահպանել «Մշակը», բայց ամենօրեայ «Մշակը» պահպանելու ոչ բաւական մտաւոր կարողութիւն ունի, ոչ բաւական բարոյական հասունութիւն, ոչ նիւթական գոհգործութիւն անելու բաւական պատրաստութիւն, ոչ էլ ընթերցողների բաւականաչափ կօնստենդենտ ունի: Ուրեմն ինչ որ ամբողջ ազգը չէ կարող անել և ինչ որ նրա կողմից անելը դեռ հրաշք է համարվում,—նոյն հրաշք գործելը միթէ մի անհատից իրաւունք կայ պահանջելու:

XI

Այսպէս թէ այնպէս մեր հրաւերը լսելի եղաւ և մեր գուշակութիւնները կատարվեցան: Երկու ամիս առաջ մենք գրում էինք: «Թէև յոյս չը կորցնելով ժամանակով կըրկին «Մշակը» ամենօրեայ դարձնելու, բայց որովհետեւ յոյս չունենք որ հայոց ազգը մեզ այնքան բաժանորդ տայ, գոնէ առաջին տարին, այլ երեւի շատ շատ այնքան կը տայ, որքան ունենինք, իսկ զրանով ամենօրեայ թերթ ոչ մի երկրում հրատարակել անհնարին է:—ուստի ոչ թէ միայն հաւանական է, բայց գրեթէ հաստատ կարող ենք ասել, որ գոնէ առաջինից 1886 թվի ընթացքում կը հրատարակենք «Մշակը» շաբաթը միայն երեք անգամ:

Եւ այդպէս էլ եղաւ:

X

Եւ նոյն յօդուածում մենք աւելացնում էինք: «Ինչ ասել կուզէ, որ շաբաթը երեք անգամ հրատարակելով մեր թերթը մենք կաշխատենք, մեր բոլոր ջանքը կը թափենք «Մշակի» համարները հետաքրքիր դարձնել, լցնել նրան հարուստ և օգտաւետ նիւթերով իւրաքանչիւր համարը կոկիկ կերպով մշակել»:

Եւ դրան, ինչպէս ասացինք, մեզ դրաւական կարող է լինել այն աշակցութիւնը, որ մեզ խոստացան թէ մեր գաւառական և մայրաքաղաքների գրեթէ բոլոր հին աշխատակիցները և թէ թիֆլիսի աշխատակիցները:

XI

Եւ ասէ նոյն իսկ «Մշակի» այս առաջին համարում ընթերցողը կրկին հանդիպում է իր հին, սիրած ծանօթներին, Համարին ու Հայկական և իր հին մի ծանօթին, որ յանձն է առել «Մշակի» արտաքին տեսութիւնը կազմելու: Բայց սրանից մեզ խոստացան թղթակիցել մեր գաւառական նախկին բոլոր թղթակիցները, երկու մայրաքաղաքների մեր առաջվայ ամենալաւ գրողները և մի քանի նորեր, որոնց թւում

ոչ թէ միայն ուսանողներ, բայց և ուսում աւարտած երիտասարդ մանաւգէտներ, արտասահմանից, բայց ընթերցողին ծանօթ պ. Կրեօնց, մեզ խոստացան աշխատակցել և մի քանի այլ գրողներ, որոնց թւում և մի երիտասարդ մանկավարժ մանաւգէտ: Մենք ունենք թղթակիցներ և Պարսկաստանից և ամեն ջանք ենք գործ դնում նորից կազմելու թիւը: Բայց հայաստանի այլ և այլ քաղաքների թղթակիցների հետ:

Մենք կաշխատենք ներկայացնել ընթերցողին հարուստ նիւթ, զխաւարապէս արուեստական, հասարակական յօդուածներ, բանասիրականներ, ֆելիետոններ, վէպեր և ծանապարհորդութիւններ, թեթեւ դիւրամարս նիւթեր, առանց մագի չափ շեղվելու «Մշակի» նախկին որոշ և խիստ ուղղութիւնից: Մենք կաշխատենք համարները հրատարակել խիստ և ամփոփ, որքան հնար է մանր տառերով, որպէս զի շատ նիւթ ներկայացնենք ընթերցողներին:

Վերջապէս հայոց հասարակութիւնը մեր վերաբերութեամբ արաւ ինչ որ կարողացաւ,—մենք էլ մեր կողմից մեր ընթերցողների և հայոց հասարակութեան վերաբերութեամբ կանենք ինչ որ կարող ենք:

Գ. Ս.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 27-ին, անցեալ 1885 թվին հրատարակեցաւ «Մշակի» համարը «Յայտարարութեան փոխարէն»: Թիֆլիսում «Մշակը» ոչ զքն ձրի չուղարկեցաւ, բայց բոլոր տեղական խմբագրութիւններից և երեք հասարակական հիմնարկութիւններից՝ Կրեմլից, հայոց Կրեմլից և արուեստագիտական խմբագրութիւնից: Մնացած համարները յանձնակցան Դավթբեկովի պալլիթին, պ. Տեր-Յովսէփեանի խանութը և ցրտոյններին, հատով (5 կօպէկով) ծախելու համար: Թէ ինչպիսի տեղերում, թէ խմբագրատան մէջ և թէ ցրտոյնների ձեռքով նոյն օրը, չորս թէ հինգ ժամկէտ ընթացքում, այն է առաւօտեան 9 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ «Մշակը» ծախվեցաւ: Թիֆլիսում 500 օրինակի քանակութեամբ: Այդ համարը տրվեցաւ նախ 1200 օրինակի քանակութեամբ, բայց որովհետեւ Թիֆլիսում շատ աւելի ծախվեցաւ, քան թէ սպասուէր էինք, այդ պատճառով մենք ստիպվեցանք այդ համարի դուրս դառնալ յետոյ: Նորից տպագրել 200 օրինակ նոյն համարից, որպէս զի բաւականաչափ գաւառներում տարածելու համար: Հետեւեալ օրը համարը յանձնակցուեց փոստը, գաւառներում ձրիապէս տարածելու համար:

Թիֆլիսում հրատարակվող «Աղբիւր» ամսագիրը մեծ համակրութեամբ վերաբերվեց դէպի «Մշակը» տպագրելով իր № 11 մէջ մի համակրական նկատողութիւն «Մշակի» մասին:

Քաղաքում ենք «Աղբիւրից» հետեւեալ տեղերը հանդուցեալ ազգային երաժիշտ Դիմիտրի Սալոմոնովիչի մասին, որ վախճանվեցաւ Կ. Պոլսում անցեալ տարվայ սեպտեմբերի 10-ին: Քսեն և հինգ տարուց աւելի անխնայ աշխատութեամբ նա հաստատ հիմք վրայ դրեց և քաղաքականացրեց այնպիսի մի ազգային հայրտութիւն, որպիսին է հայոց ձայնագրութիւնը: Հանգուցեալ հնութեան տակից հանեց այդ արուեստը և իր տաղանդով եղաւ հիմնադր ուսուցչապետ հայկական ձայնագրութեան դպրոցի, որի չնորհիւ այդ դերարուեստն այժմ բաւական տարածված է ազգի մէջ և որից եղած են բազմաթիւ քաջավարժ ձայնագէտներ և ուսուցիչներ: Թաշնեանը եղաւ առաջին ներմուծողը հայոց ձայնագրութեան ուսուցչապետի հայերի մէջ, հրամանով և խրախուսանքով հանգուցեալ Գեորգ կաթողիկոսի: Նա ձայնագրեց աշակերտ շաբաթական և ուրիշ բազմաթիւ եկեղեցական երգչախմբութիւններ, որոնք տպագրվեցան: Նա ձայնագրեց և բազմաթիւ ազգային երգեր: Թաշնեանը լաւ հմուտ էր և եւրօպական երաժշտութեան: Հանգուցեալը ծեր էր և յանկարծակի մեռաւ: Նա թողեց բազմաթիւ աշակերտներ:

Յայտնի է որ անցեալ տարվայ հոկտեմբեր ամսին ներքին գործերի պ. նախարարի կարգադրութեամբ իսպառ դադարեցրած է վրաց ամենօրեայ «Գրեթե» լրագիրը: Նա սկսել էր հրատարակվել 1866 թվից և վրաց ամենատարածված և միակ ամենօրեայ թերթն էր: Այդ լուրը հաղորդելով հայոց «Աղբիւր» ամսագիրը աւելացնում է. «Վեր վրացի եղբայրները մտածում են որ եթէ «Գրեթե» նորից հրատարակելն անկարելի լինի, գոնէ հիմնեն մի նոր ամենօրեայ թերթ, որ ծառայէ իրանց պէտքերին: Յանկանում ենք կատարեալ աջողութիւն»:

Թիֆլիսի թատրոնում տրված օպերաներից ամենից շատ գրաւում է հասարակութեան ուշադրութիւնը ամբողջ սեզոնում Ռիգէի «Կարմէն» օպերան, որ մի քանի անգամ վրա վրա տրվեցաւ և թատրոնը միշտ լի էր լինում: Այդ օպերայի երաժշտութիւնը շատ գեղեցիկ և դուրեկան է, միայն ինչն օպերան աւելի արժանի է օպերետոյի անունը կրելու, քան թէ օպերայի: Երգիչները արիւն Սմիլնովա միակ է որ այդ օպերայում կարող է կատարելապէս անցանդիմանելի համարվել: Իսկ տէնօր Մասիմի, թէև գեղեցիկ ձայն ունի, բայց նրա ձայնը շատ մշակվածներից է և մանաւանդ նրան շատ է վնասում երգեցողութեան մէջ ուսուցչ լեզուի նրա անտանկի հրէական արտասանութիւնը:

Մեր երիտասարդ նկարիչ, պ. Գ. Բաշինջաղեանի վերջին պատկերներից մինն էր «Թիֆլիսի տեսարանը»: Վերջի կամուրջից վերջրած, լուսնեակ գիշեր ժամանակ: Մեր նկարչին շատ լաւ է աջողվում լուսնի էֆէկտը, այն է ջրի մէջ արտափայլող լուսնի շողերը, գիշերային թափանցիկ օդը լուսնի շողերով լուսաւորված և նոյնպէս աների պատուհանների լուսաւորվածը գիշեր ժամանակ: Յիշեալ պատկերը արդէն ծախված է:

Ռուսաց յայտնի և տաղանդաւոր նկարիչ պ. Մակովսկի անցեալ տարի ձառագործորէց Կովկասում: Թիֆլիսից նա ուղերթից Երևանեան նահանգը: Այստեղ էին որ ուսն նկարիչը հիացած էր Կովկասի բնութեամբ:

Հայ երիտասարդ գիտնական—լեզուագէտ պ. Գրիգոր Խալաթեանց ուղարկել է մեզ Մովսիկայից իր վերջին հետազոտութիւնը «Объём очерка Армянских сказок» վերնագրով: Հեղինակը հետազոտում է իր գրութեան մէջ հայոց հին առակները և ազգային աւանդութիւնները և համեմատում է նրանց սլավոնական, ուսուցչ, յունական, գերմանական և ֆրանսիական առակների և ազգային աւանդութիւնների հետ և գտնում է նրանց բոլորի մէջ ընդհանուր նմանութիւն, որ ցոյց է տալիս թէ նրանք բոլորն էլ ընդհանուր հնդկա-եւրօպական ծագումից են: Բրօշիւրը մեծ հետաքրքրութեամբ կարդացվում է: Այդ գրութեան յետոյ պ. Խալաթեանցը խոստանում է հրատարակել հայոց ժողովրդական առակների ճիշդ թարգմանութեան առաջին մասը, աշխատելով պահպանել ուսուցչ թարգմանութեան մէջ հայոց ժողովրդական բարբառի բոլոր առանձնապատկութիւնները: Բրօշիւրը տպված է անցեալ 1885 թվին, Մովսիկայում, Տ. Բիսի տպարանում:

Ստացանք «Մանկավարժանոցի» Զաւեյաւածը: Դա մի մանկական պիէտա է «Մի կողով կապի» անունով, մի արարողութեամբ, թարգմանութիւն Խ. Վ. Ս. Բրօշիւրը տպված է Ալաւրիայում, Մկրտիչ Ղալաթեանի տպարանում, անցեալ 1885 թվին: Գինը 20 կօպէկ է:

Ստացանք Մարտիկայի պ. Մ. Փօթուգալեանի հրատարակած «Հայ դիւցապոստի» մը անունով վէպը: Այդ վէպը արատաւորված է: «Արևուտը» լրագրից որ հրատարակում էր Փարսիում 1859 թվին: Վէպի նիւթը վերցրած է այն ժամանակներից, երբ Արևմտեան նահանգը պատկանում էր պարսիկներին: Վէպի հերոսներն մի հայ դիւցապոստի աղջիկ է, որ անչափ գեղեցիկ լինելով Հիւսէյն-խանին, Արևմտեան բերդի իշխանի աշխատութիւնների աւարկայ էր դարձել: Բայց աղջիկը սիրահարված է մի քաջ հայ երիտասարդի վրա և գերի ընկնելով խանի ձեռքը, ու բանտարկված լինելով, տանում է ամեն տեսակ տանջանքներ և այնուամենայնիւ չէ ուրանում ոչ իր սէրը, ոչ էլ իր հաւատը և անձնատուր չէ լինում խանին, այլ աւելի յարմար է համարում, տեսնելով բանտի պատուհանից իր սիրելին, որ եկել էր նրան

համեմատ: Ուրիշ կերպ չէին կարող յուսալ թրքա-
շայոց վիճակի բարելավման: Կարծեաց ազատու-
թիւն, որուն ոչինչ կը պատասխանենք:

Նորեան էֆենդիի ընտրութիւնը կը նշանակէր
թէ՛ թրքասեր քաղաքականութիւնը Ազգ. ժողովոյ
մէջ տիրապետող քաղաքականութիւնն է: Գարու-
թիւն պատրիարք հպատակեցաւ այդ քաղաքակա-
նութեան և Բ. Կրան ու Պատրիարքարանի յարա-
բերութիւնները բարելոցեցան:

Երուսաղէմի նոր պատրիարքի մը ընտրութիւնը
ապագայոց մը եղաւ թէ՛ Գարութիւն պատրիարք
արժանացած է Ազգ. ժողովոյ գոհունակութեան:
Ընտրելով Գարութիւն Պատրիարքը նաև Պատ-
րիարք Երուսաղէմի Ազգ. ժողովն այնպիսի մի-
ջոցներ ձեռք առաւ, որով Նորին Սրբազնութիւնն
բաւական ժամանակի համար պիտի վարէ նաև
Պոլսոյ պատրիարքական պաշտօնը: Եթէ Ազգ. ժո-
ղովն հակառակ լինէր Գարութիւն սրբազանի քա-
ղաքականութեան, ի հարկէ առիթն օգուտ կը
բաղէր զնա անմիջապէս հեռացնել Պոլսէն:

Պոլսոյ պատրիարքական խնդրոյն հետ Պոլսոյ
հայր բաւական մատանջութեան մէջ գտնուե-
ցան և կը գտնուին տակաւին: Մօտաւորապէս
400,000 լուսլիի պարտք մը կը ծանրանայ հայ
ազգի վրայ: Պոլսոյ հայք պիտի մասնակցեն այդ
պարտոց վճարման եթէ իրենց հաճոյ թուի: Տաճ-
կա-Հայաստանի հայք պիտի մասնակցեն այդ պար-
տոց վճարման, եթէ իրենց հաճոյ չը թուի խի:

Երբու տարիներու ընթացքի մէջ կաթողիկոսա-
կան հարցն յազգեց ընդհանուր ազգը...

Այս երկու տարիներու ընթացքի մէջ յազգե-
ցան թուրքիոյ Հայերն կաթողիկոսական, պատ-
րիարքական և Երուսաղէմական խնդիրներով:
Ազգային դատարարական խնդիրն ընդա-
մնաց: Ներսէսեան գիշերօթիկ վարժարանը ա-
ռանց ծնելու մեռաւ: Այդ վարժարանը արձան
մը պիտի լինէր Ներսէսի անուան: Պոլսոյ մէջ
թուրքիոյ մայրաքաղաքին մէջ, այնպիսի արձան
մը կանգնել հնարաւոր չէր: Կենտրոնական
վարժարանի մը բացումն կը կարծես մօտաւորա-
պէս տաք հազար լուսլիի: Հինգ տարիներ չէին
բաւեր այդ ահագին գումարն հանգանակելու:
Վեցերորդ տարին թերեւ աւելի նպաստաւոր լի-
նի: Այժմ մի քիչ շարժում կը տեսնուի:

Հայ օրագրութեան մէջ նշանաւոր երևոյթն ե-
ղաւ երեսուն երեք տարուան «Մասիս»-ի աներե-
ւութեան և «Արեւելք» տրիպտիկոսութիւնը:
«Արեւելք» թուրքիոյ Հայոց միակ թերթն է որ կը
կառավարուի ռուս մտացած երիտասարդներէ:

Թուրքիոյ Հայոց գրականութիւնը եթէ փափա-
գելի փայլը չունեցաւ բայց և այնպէս ի նկատ
առնելով մեր կացութիւնը ըստ բաւականին ար-

գիւնաւոր եղաւ: Լեզուաբանական, գիտական,
մանկավարժական, վիպական դրոյ հաւաքածոյ մը
ունեցանք այս երկու տարիներու մէջ, որոց մի
քանիսն վրա առիթ կունենանք խօսելու:

Պ. Նորայր Բիւզանդացիի «Բառգիրքն» աւար-
տեցաւ 1884 թուականին, այդ բառգիրքն հայոց
ժամանակակից մատենագրութեան մեծ փառքե-
լէն մին է: 1885 թուականը ունեցաւ Հ. Ալիշանի
սքանչելի գործը «Ստեան» կիլիկիոյ վառաց կո-
թողը, աղետից մահաբձանն: Այդ գիրքը պարծանաց
տիրացու մէ հայ մատենագրութեան համար:

Այս առաջին թղթակցութեան մէջ համառօտա-
բար մեր ընթերցողաց ներկայացուցինք անցեալի
վրայ մի դադարաւոր, առանց նպատակաւոր կամ
աննպատակ կարծիք յայտնելու պատահած իրողու-
թեանց մասին: Մեր յաջորդ նամակներով մէկ
կողմանէ կը դադարէր օրուան խնդիրներով միւս
կողմանէ կը յազգեց անցեալին վերաբերեալ մի
քանի խնդիրներ, առանց որոյ գիտաւ պիտի լինի
ըմբռնել և բացատրել այն ամէն դէպքերն ոչ թէ
հանդէս կուգան:

Հայկակ.

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՑ

ԽԱՐԿՈՎ, 30 դեկտեմբերի: Ազնուական-
ների ժողովը միջնորդում է պրոցեսական
տուրքը վերացնելու մասին ազնուականների
կալուածներին անմիջական ժառանգութեան
ժամանակ:

ԲԵԼԳԻԱ, 30 դեկտեմբերի: Սերբիան ա-
ռաջարկում է բանակցութիւններ սկսել Բու-
խարէստում:

ԿԱՅԻՐԷ, 30 դեկտեմբերի: Շարաթ օր,
խեղիվի նախագահութեամբ կայացած խոր-
հրդում Մուխթար փաշան յայտնեց, որ
Սուլթանը կարող է խաղաղեցրած լինել,
առանց անպիտանների օգնութեան, միայն
եզրկատական զորքով:

Ս. ՊԵՏՈՐԲՈՒԳ, 30 դեկտեմբերի: Ռու-
սաց 1 ռուբլ 1օնդոնի վրա արժէ 23³/₄
պէնս, Համբուրգի վրա 201³/₄ պֆ., Փա-
րիզի վրա 249 անտիմ: Ոսկին արժէ 8
ր. 33 կ., 5⁰/₁₀ ներքին առաջին փոխարու-
թեան տոմսը արժէ 232 ր., երկրորդ
215³/₄ ր., 5¹/₂ օրէնտ 102 ռուբլ:
Բօրսայի արամազրութիւնը ամուր է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

„ԱՂԲԻԻԲ“

ԲԱՅՈՒԱՆ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻԿԱՑ 1886 թ.

«ԱՂԲԻԻԲ» ՄԻԱՄՍԵՍԱՑ ՊԱՏԵՐԱԶԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԻ

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

ԶՈՐՐՈՐԻ ՏԱՐԻ

(ՏԱՐԵՆԸ ԼՈՑՍ Է ՏԵՍՆՈՒՄ 12 ՀԱՄԱՐ)

«Աղբիւր» թէ ուղղութիւնը, թէ դիրքը մի և նոյնը կը մնան: Միակ փոփոխութիւնը՝ աւելի
չքեղ կը հրատարակուի: Պրէմիաները կը լինեն աւելի մեծ և աւելի չքեղ. 1) Անիի աւերակներից,
«ԱՐՔԱՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ», մի արշին մեծութիւնով, 2) «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ», 3) Անիի
աւերակներից «ՀՈՎՈՒՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ», միուկէս արշին մեծութիւնով:

Բ Ո Վ Ա Ն Դ Ո Ւ Թ Ի Ն

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I. Վէպեր, մանրամբէպեր, դրոյցներ, առակներ, հեքիաթներ, ճանապարհորդութիւններ, կենսա-
գրութիւններ:—II. Բանաստեղծութիւններ:—III. Գիտութիւն և արուեստ:—IV. Հետաքրքիր տեղեկու-
թիւններ:—V. Այլ և այլք:

Զ Ո Ւ Ա Ր Հ Ա Լ Ի Ք

VI. Մանկական, ֆրիթթեան, շախմատի և այլ խաղեր: Բերուաներ, թուարանական խնդիրներ:
Անեկդոտներ, հանելուկներ, չուտասելուկներ:—VII. Ճայնագրած լրբեր նոտաներով:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԻ

VIII. Կրթութեան և դատարարական վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ:—IX.
Առաջարկութիւններ, խորհուրդներ:—X. Մատենախօսութիւն և նոր գրքեր:—XI. Խառն լուրեր:—
XII. Պատասխաններ: Զայտարարութիւններ:

Երկրորդ բաժինը հրատարակվում է առանձին թերթով տարեկան երեք անգամ:
Տարեկան բաժանորդներն ստանում են վերոյիշեալ երեք պրէմիան՝ յունուարին, յուլի-
սին և դեկտեմբերին:

Որպէս զի թէ ներկայ 85 և թէ անցեալ 83 թուականների պէս տարուայ հէնց սկզբից տիրա-
ված չը լինելը «Աղբիւր» բաժանորդագրութիւնը դադարացնելու չէ: ՍՊԱՌՄԱՆ ՊԱՏԱՌՈՎ,
խնդրում ենք մեր բաժանորդներին վերանորոգել, և թէ նոր կամեցողները աճապարեն ստորագրվել,
որպէս զի մինչ ևս կարող լինելք մօտաւորապէս որոշել ասպիկի օրինակների քանակութիւնը:

«ԱՂԲԻԻԲ» տարեկան բաժանորդագրելը 3 ռուբլի է, կէս տարվանը՝ 2 ռուբլի, ա-
ռանձին համարները 50 կոպէկ:

Հասցէն՝ Тифлисъ, редакция „Агбура“, (իսկ արտասահմանից՝ Tiflis (Cau-
case) Rédaction du journal „AGBUR“.

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

1886-ին

„ԱՐԶԱԳԱՆԳ“

ՇԱՐԱԹԱԹԵՐԹԸ

(ՀԻՆԳԵՐՈՐԻ ՏԱՐԻ)

Կ Ը Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ր

ՄԻՆԵՐՈՅՆ ԴԻՐԲՈՎ ԵՒ ՀԵՏԵՆԱԼ ՊՐՕԳՐԱՄԱՑՈՎ.

I. Տեղեկութիւններ կառավարութեան գործողութիւնների և օրէնսդրական միջոց-
ների մասին:—II. Առաջնորդող յօդուածներ հասարակական կեանքի նշանաւոր հարցե-
րի վերաբերութեամբ:—III. Թղթակցութիւններ հայաբնակ տեղերից. ընդհանուր տե-
սութիւն հայ և օտար լրագրիների տեղեկութիւնների և կարծիքների:—IV. Տեսեսա-
կան և առևտրական հարցերի քննադատութիւն:—V. Զօրուածներ ժողովրդական կրթ-
ութեան վերաբերութեամբ:—VI. Արտաքին տեսութիւն. յօդուածներ և տեղե-
կութիւններ արտասահմանեան հասարակական և քաղաքական կեանքի նշանաւոր անց-
քերի մասին:—VII. Կրիտիկա և մատենախօսութիւն:—VIII. Ֆէլիէտոն:—IX. Զանազան
լուրեր:—X. Զայտարարութիւններ:

Տարեկան բաժանորդագրին է 5 ռ. կէս տարուանը 3 ռ.
Թիֆլիսում ստորագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենտրոնական գրախճառանոցում»:
Օտարաքաղաքայից զինում են Тифлисъ, въ Редакцію „Арцагангъ“. (իսկ արտասահ-
մանից՝ Tiflis. Redaction du journal „ARDZAGANG“.

О Т К Р Ы Т А П О Д П И С К А

НА ЕЖЕДНЕВНУЮ ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКУЮ ГАЗЕТУ

„КАВКАЗЪ“

Въ 1886 году газета „Кавказъ“ будетъ выходить подъ прежнею редакціею и по преж-
ней программѣ, ежедневно, не исключая и понедѣльниковъ.

ПОД П И С Н А Я Ц Ъ Н А:

С Ъ П Е Р Е С Ы Л К О Ю:

Съ доставк. въ Тифлисъ	По Имперіи.	По почтовому союзу.
На годъ . . 11 р. 50 к.	На годъ . . 13 р. — к.	На годъ . . 18 р. 40 к.
„ 1/2 года. 6 „ — „	„ 1/2 года. 7 „ — „	„ 1/2 года. 10 „ — „
„ 3 мѣсяца 3 „ 50 „	„ 3 мѣсяца 4 „ — „	„ 3 мѣсяца 6 „ — „
„ 1 мѣсяць 1 „ 50 „	„ 1 мѣсяць 1 „ 75 „	„ 1 мѣсяць 2 „ — „

Подписка принимается исключительно въ конторѣ редакціи, Тифлисъ, уголъ Го-
ловинскаго проспекта и Баятинской улицы, домъ Ротина.

Для иногородныхъ адресовать: Тифлисъ, въ редакцію газеты „Кавказъ“.

„ԱՐՄԵՆԻԱ“

Հրատարակվում է հայերէն լեզուով Ֆրանսիայի ՄԱՐՍԵՅԻ քաղաքում շաբաթը եր-
կու անգամ: Համարաւորութեամբ ֆելիկս Անֆանտէի և խմբագրութեամբ Մ. Փորթու-
կալեանի:

Տարեկան բաժանորդագրին է 10 ռուբլ: Խմբագրութիւնն ինքը կը վճարէ փոստի ծախքը:

„ԱՐՄԵՆԻԱՅԻՆ“ բաժանորդ գրվելու համար կարելի է դիմել խմբագրութեանը
Ֆրանսիայի հետեւեալ հասցեով. M. Portoukalian, Redacteur du journal „Armenia“,
rue „Arménie“, 2 (Hôtel Forer) Marseille (France).

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

ОТКРЫТА ПОДПИСКА

на 1886 годъ

НА ГАЗЕТУ

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

ИЗДАВАЕМУЮ ВЪ ТИФЛИСѢ

(III годъ изданія).

Выходить ежедневно, не исключая и понедѣльниковъ.

Газета въ 1886 году будетъ выходить подъ прежней редакціей, по прежней программѣ,
при участіи тѣхъ-же сотрудниковъ.

Программа газеты общая всѣмъ литературно-политическимъ ежедневнымъ изданіямъ,
съ возможно широкимъ развитіемъ мѣстнаго отдѣла.

Подписная цѣна съ доставкою и пересылкою въ Россіи: на годъ 10 руб., на пол-
года 6 руб., на 3 мѣсяца 3 руб. 50 к., на одинъ мѣсяць 1 руб. 50 к.

За границу на годъ 17 руб., на полгода 9 руб. 50 к.

За перемѣну адресовъ уплачивается: иногороднаго на иногородный—40 к., город-
скаго на иногородный—1 руб.

Подписка принимается не иначе, какъ съ перваго числа каждаго мѣсяца.

Подписка принимается: въ Тифлисъ въ конторѣ редакціи при Газетномъ Агентствѣ
В. Шавердова, въ С.-Петербургѣ книжномъ магазинѣ „Новаго Времени“. Иногородные
адресуютъ свои требованія въ Тифлисъ въ контору редакціи „Новаго Обозрѣнія“, при
газетномъ Агентствѣ В. Шавердова.

Редакторъ-издатель А. В. Степановъ.